

նուամբ միայն նշանակեալ, զենթակայէ զումքէ ասի,  
իսկ յառանձնականութիւնը ոչ եւ ոչ նենթակայոջ յու-  
լստ գօրութեան, այլ ըստ մեք էն:

ներդրծութեան եւ ար-  
դեամբ երեւեալ: Վասն  
որոյ եւ առաջին եւ իսկա-  
գոյն եւ մանաւանդ զաա  
անուանեցին զոյացութիւն  
վեհագոյնքն, եւ յորոց  
մերքն ընկալան զբանակա-  
նութեանն գարժողութիւն,  
զի ի սման գտին եւ ծանեան  
որպէս զանուն հասարակին,  
նոյնպէս եւ զբանն:

“Յիշաւի ուրեմն զան-  
հատ զոյացութիւնն իսկա-  
պէս եւ նախկին ասացան  
զոյացութիւնն իսկական լուսա.. մեկն. Ստոր., էջ 83:

“Զիմրի ոչ է առաջին  
եւ իսկական լուսա.. մեկն. Ստոր., էջ 121:

Խոսրովիկ, էջ 115-116:

“Զի ամենայն իրի սահ-  
ման յերից յայցանէ կա-  
տարի, ի մոտածութենէ  
գոյին, եւ ի նոյն ինքն ի  
գոյին, եւ ի տեսութենէ եւ  
որպէս որ կամփի զահման  
մարդոյն բացայատել, նախ-  
կին յարձակի մորքն տե-  
սանել զմարդուն, եւ զնոյն  
մոտացն տես եւ աշացն ա-  
ռաջի գնէ, եւ ապա բանիւ  
զոյն սահմանէ ասելով՝  
մարդ - կենալանի, մարկա-  
նացու, մոտաց եւ հանճա-  
ռոյ ընդունակու:

Արքոյիշեալ համեմատութիւնները չպէտք  
է հասկանալ այն մորով, որ խոսրովիկն օդ-  
տուել է համեմատութեան առնուած երկերից:  
Արիստոտելեան իմաստասիրութեան այն մաքերը,  
որոնց հանդիպում ենք խոսրովիկի երկերում,  
այնքան լնդհանուր ու սովորական են եւ այն-  
քան յաճախ կրկնուած Արիստոտելեան թարգ-  
մանութիւններում, որ սիալ կը լինէր այս կամ  
այն զրուածքը կամ հատուածը համարել նրանց  
աղքիւր առանց որեւէ լուրջ հիմքերի:

Արքոյիշեալ համեմատութիւններից կա-  
րելի է ընդհանուր կերպով միայն եզրակացնել,  
որ Արիստոտելեան հնագոյն հայ թարգմանու-  
թիւնները խոսրովիկի ժամանակ ութերորդ դարի  
սկզբում գոյութիւն են ունեցել եւ ծանօթ են  
եղել նրան:

ՊՐՈՒ. Յ. ՄԱՆԱՀԵԱՆ

Երեւան:

(Տարուհակելի):

## ԽՈԼԾՄԸ ՀՅՅ ՄԱՏԵՆԵԳՐՈՒԹԵԱՆ ՄԷՋ

(Տարուհակութիւն:)

### [ԱՅՍ ԳԼՈՒԽԸ. ՃԵԹԵԳՐԻ ՀԱՄԵՄԱՏ]

ՈՐՔ ԶԱՅՐ ԵՒ ԶԲՈՐԻ

Իսկ ոմանք յաւելոյն եւս յամբարշտու-  
թիւն, իբր փաղչելով ի ձախոյն, խոտոր(ին) ի  
յաջ կողմ. ասելով թէ պատճառն ամենայն  
բարեաց եւ չարեաց մերոց ոչ մեք, այլ է առա-  
ջին պատճառն աստուած. եւ զայս ասեննոր հե-  
թանոսք, որք են Տաճիկք. փաղչելով յառաջա-  
սացեալ բախտէ եւ ճակատագրէ, եւ փոխանակ  
նոցա յառաջին պատճառն վերագրեն զշարկն,  
զի մի՛ լցից(ն) երկու աստուածք, չար եւ բարի,  
ըստ Մանիկոսի, այլ մի եւ նոյն է պատճառ եր-  
կոցունցն, ասեն:

Այլ մեք՝ դասք ճշմարտայսիրութեան, հե-  
տեւոլք ուղղութեան, ընդդիմանամք այսմ, ասե-  
լով թէ Աստուած ոչ է պատճառ չարեաց, այլ  
միայն բարեաց:

Նախ. զի բարին էութիւն է. ուստի յայտ  
է զի հակադարձին առ միմեանս. զի ամենայն որ  
բարիէ է, է. եւ ամենայն որ է է բարի է. իսկ  
չարն ոչ էութիւն է: Արդ՝ Աստուած պատճառ  
էութեան է, եւ ոչ է ոչ էութեան. այլ՝ չարն  
ոչ է յԱստուածոյ:

Նախ. ասեմք առ այս. եթէ չարն յԱստու-  
ծոյ է, սիրէ զւարն, սիրէ եւ զւարագործն, որ է  
պատճառ չարեաց. այսինքն՝ զատանայ. զի սա-  
տանայ տանջելոց է, որ պատճառ չարեաց: Ապա  
ուրիմն ոչ է չարն յԱստուծոյ:

Երկրորդ. թէ չարն յԱստուծոյ է, կա-  
րութեամբ առնէ. թէ անկարութեամբ, ահա  
բոնդատեալ է. եւ եթէ կարողութեամբ առնէ  
զւարն, անկար է առնել զւարին:

Երրորդ. թէ չարն յԱստուծոյ է, ինքն  
բարի է (եւ) առնէ զւարն, թէ չար է որ առնէ  
զւարն, ահա հակառակ գործէ ինքեան. իսկ թէ  
չար, եւ առնէ զւարն, ոչ որ է յէակքս բարի:

Չորրորդ. թէ չարն յԱստուծոյ է, սկիզբն  
ամենայնի Աստուած է բարեաց եւ չարեաց, ապա  
ոչ է սկզբնաչարն առաջին գտակն չարեաց, սա-  
տանայ, որպէս նորա բարբանջին:

Սակայն բեր զառարկութիւնն նոցա տես-  
ցուք, զեղծումն նոցա յարմարեցուք:

Որ եւ առարկեն, նախ. նա (աստուած)

<sup>1</sup> Անեսետիկի հրատարակութեան մէջ Ստոր. մէկու-  
թեան սկզբը պակաս է: Այս հատուածը առել ենք իջ-  
մաննի թ. 1810 ձեռագրից:

2 Հմատէ նաև Կերած:

եթէ պատճառն է հարկաւոր եւ ներգործութեան<sup>1</sup> նորին. այլ արդ՝ Աստուած է պատճառ ամենեցուն եւ հարկաւոր. ապա ուրբեմն եւ ներգործութիւն նորին է հարկաւոր:

Ասեմք առ այս. եթէ կրկին է պատճառն, մերձ եւ հեռի: Այլ արդ՝ մերձ պատճառն է հարկաւոր եւ ներգործութիւնն իւր. իսկ հեռին ոչ է հարկաւոր: Այլ Աստուած, պատճառ ամենեցուն, ոչ մերձաւոր, այլ հեռաւոր. վասն որս ոչ է պատճառ ներգործութիւն նորին չարեաց:

Երկրորդ. ասեն թէ Աստուած նախ քան զստեղծանելն մեր, ի նախատեսութիւնն իւր եթէ ոչ (պէտք է ըլլայ՝ ետես) զամենայն նոյնպէս լինել, զշարն չար եւ զբարին բարի: Այլ արդ՝ հարկ է ամենեցուն գոլ այնպէս որպէս Աստուած ետես եւ գիտաց:

Ասեմք առ այս, թէ զոր աւրինակ արվեստաւոր ոք գործէ սայլ եւ հեռուստ տեսանէ ոք զնայ զոր գործէ. այլ ոչ թէ տեսութիւնն հարկեաց զսայլն լինել նոյնպէս, այլ կամք արհեստաւորին: Նոյնպէս եւ տեսութիւնն Աստուծոյ, որ (պէտք է ըլլայ՝ ո՛չ) հարկէ ի վերայ մեր գործել զբարի կամ զշար, այլ կամք մեր:

Երրորդ. ասեն եթէ կամքն Աստուծոյ ոչ է ընդունայն, եւ ոչ ոք կարէ կալ ընդդէմ կամացն Աստուծոյ. վասն որոյ զոր ինչ կամի առնէ, զոմն բարի եւ զոմն չար:

Ասեմք առ այս, եթէ կամացն Աստուծոյ ոչ ոք կամքն, որպէս եւ կամի, եւ նոյնպէս առնէ. այլ չար ոչ կամի եւ ոչ առնէ:

Չորրորդ. ասեն՝ գործօնայք չարին է յԱստուծոյ, որպէս կամքն, ապա եւ չարն է յԱստուծոյ. զի նա ստեղծ զկամքն:

Առ այս ասեմք՝ եթէ Աստուած ստեղծ զկամքն բարի եւ զբարին եղ առաջի կամել եւ առնել, իսկ նա անձնիշխան կամաւք հեռացեալ ի բարոյն, գտակ (եղ) եւ չարին. զի չարն ոչ այլ ինչ է բայց հեռացումն ի բարոյն:

Դարձեալ ասեմք. եթէ Աստուած ստեղծ զկամքն, նաեւ զի հետակ եւ զմարդիկ ի բարին. եւ կամի զբարին, եւ բոնադատէ գործել զբարին: Ուստի յայտ է զի սերմանեաց ի բնութիւնս զբարին, եւ աւրենս եղ բարոյ. այլ եւ խրատ եւ յորդորումն պարզեւք բարեաց. իսկ զշարն ոչ կամի, եւ ոչ բոնադատէ սիրել, այլ տանջանք եւ պատիժ եղ գործողացն զշարն:

Հինգերորդ. ասեն՝ թէ չարն յԱստուծոյ չէ, վասն էլ ներէ չարեաց, եւ սատանայի եւ չար մարդկան:

Ասեմք առ այս. եթէ չարն ոչ է յԱստուծոյ, որպէս բարին. զի բարին ըստ կամաց է. իսկ չարն թոյլ տալով. եւ այլ է ըստ կամացն, որ յաւժարութեամբ է, եւ այլ է թոյլ տալովն, որ իբր ոչ է ի կամաց:

Դարձեալ. Թոյլ տալ եւ ներգործել (պէտք է ըլլայ՝ ներել) չարաց՝ վասն բարոյ է. զի նախախնամութեամբ բազում բարիս յառաջ ածէ ի չարէ. որպէս՝ սատանայի թոյլ տայ զի փորձեսցեն զբարիին, եւ աւելցին ի պսակն: Կայ եւ մարդկան չարաց թոյլ տայ կամ զի ընտրեսցեն զբարիս կամ յետոյ զղասցին, եւ պէսպէս նախախնամութեամբ, որպէս ինքն գիտէ Աստուած ներէ չարեացն:

Վեցերորդ. ասեն՝ ապա ընդէր ասէ ինքն Աստուած թէ նև եմ որ առնեմ զիսաղաղութիւն եւ հաստատեմ զշարս: Ե՛ս սպանանեմ եւ նև կեցուցանեմ. եւ եթէ նև խստացուցի զսիրտս Փարաւոնի:

Ասեմք առ այս, եթէ կրկին է չար. է չրզըծաց (պէտք է ըլլայ՝ չար գործոց), է չար պատժոց: Այլ արդ՝ չրզըծաց (չար գործոցն) ոչ է յԱստուծոյ. եւ չար պատժոցն է յարդարութեանն Աստուծոյ, որ հատուցանէ արդարապէս:

Եւթներորդ. ասեն՝ ի գիրս քո ամենեքեան գրեցան: Եւ Աւետարանն. Որդի մարդոյ երթա, որպէս եւ գրեալ է վասն նորա: Ապա ուրեմն ամենայն ոք ի հարկէ գրոն այնորիկ լինին եթէ չար եւ եթէ բարի:

Ասեմք առ այս. եթէ կրկին ունի դէմ գիրն գպրութեան կենաց. մինն՝ արդարութեան այժմու կենացս, որ է փոփոխական, որմէ ոք ջնջել (պէտք է ըլլայ՝ յորմէ կարէ ոք ջնջիլ). եւ միւսն յաւիտենական նախասահմանութեանն Աստուծոյ, յորմէ ոչ ոք կարէ ջնջիլ: Արդ՝ ժամանակեայ արդարութիւնն յայտնի է, որը անձնիշխան կամաւք վարին, փոփոխին երբեմն ի չար եւ երբեմն ի բարի, եւ ժամանեն փրկութեան կամ դպրութեան<sup>1</sup>. բայց նախասահմանութիւնն Աստուծոյ ճանաչէ զիրկեալսն, եւ տայ զկերպ փրկելոցն, որով փրկին ընտրեալքն. իսկ մարդիկ քանձնիշխան կամաւք եւ գործօք հաստատեն (պէտք է ըլլայ՝ հասանեն) յայնմ փրկութիւն չնորհաց եւ փառաց: Այս է գիր ընտրելոցն. եւ այնպէս է երթալ որպէս եւ գրեալ է վասն նոցա, եւ այսպէս է ընտրեալն (պէտք է ըլլայ՝ ընտրելն) եւ կոչելն եւ արդարացուցանելն, որ-

<sup>1</sup> Ա. եւ Ց. ներգործութիւն:

<sup>2</sup> Ա. եւ Ց. գատապարտութեան:

պէս եւ գրէ Առաքեալն։ Կոյնպէս եւ Կոմիտացիութեան Ճանաչումն չարեաց<sup>1</sup>, որք անձնիշխան կամաւք եւ չար գործովք խոտեսցին չարքն։ ապա յիմար են այնոքիկ որք ասեն թէ կամիմ առնել զհաճոյս իմ, զի թէ ընտրելցն եմ փրկեցայց եւ ոչ դատապարտեցայց։ որպէս յիմար հիւանդն ասիցէ՝ կամիմ ուտել եւ ըմպել զհաճոյս իմ, եթէ առողջանալոց եմ առողջացայց, եւ եթէ մեռանելոց եմ մեռայց։

Եւ ի բացայայտութիւն այսմ բանի, ծանրի ըստ օրինակի. որպէս արեգակն զամենայն լուսաւորէ, այլ պարզ նիւթն լուսաւորի եւ թանձրն՝ ոչ, Կոյնպէս եւ Աստուած զամենայն մարդոյ փրկութիւն կամի, որք անձնիշխան կամաւք համակամ լինի(ն, կամ լինիցին) Աստուած՝ կրկին (պէտք է ըլլայ՝ փրկին) եւ որք հակառակին ոչ փրկին։ Այլ՝ արեգակն բանալլ (պէտք է ըլլայ՝ անքանապէս) ոտք զլցան, իսկ Աստուած՝ բանիւ, իմացմամին տը (պէտք է ըլլայ՝ ընտրէ) զարդանիս, եւ փրկէ, որպէս մարդիկ զնտրելս ընտրեն եւ ոչ զիստելիս։

Մ. էջ 33 թ-36.

#### Գ.

Եզրորդ մոլորութիւն Այլազգեաց<sup>2</sup>։

Որք ուրանան զմարդեղութիւն բանին, եւ առարկեն նախ այսպէս, եթէ Աստուած ոչ է մարմին, եւ ոչ զօրութիւն ի մարմին, եւ ոչ փոփոխելի. արդ՝ եթէ մարդ եղեւ՝ փոփոխելի է, Պատասխանեմք, եթէ Աստուած բանն մարդ եղեւ անփոփոխ է աստուածային կութիւն։ Պրակէ հոգի միաւորի ընդ մարմնոյ եւ լինի մարդ. եւ ի հոգի գոլոյն ոչ փոփոխի։ Զի անմարմինն թէպէտ միաւորի, ոչ փոփոխի ի մարմին<sup>3</sup>։

Դարձեալ ասեն. թէ անպարագրելի բանն

մարմին էառ. կամ մասն բանին մարմին եղեւ. կամ մարմինն անբովանդակելի ընդ<sup>4</sup> բանին։

Ասեմք թէ բոլոր եւ կատարեալ բանն ի մարմին պարագրեցաւ եւ մաց անբովանդակելի։

<sup>1</sup> Ա. և. Տ. Կախագիտութիւնն ճանաչումն է չարեաց։

<sup>2</sup> Եկեսցուր ի յերորդ զլուին, որ ուրանան

գմարդեղութիւն բանին։ Առարկեն, եւ այլն։

<sup>3</sup> Ա. բնութիւնն։

<sup>4</sup> Ա. մարդկութիւնն։

<sup>5</sup> Ա. էութիւնն։

<sup>6</sup> Ա. մարմինն։

<sup>7</sup> Ա. ըստ։

եւ մարմինն ընդ բանին միաւորեալ՝ մաց պարագրելի։ զի ի մարմին գոլոյ այլայլեցաւ<sup>1</sup>. որպէս բանն ի գրի միացեալ եւ խօսք մարդոյ ի բազում լսելիս կատարեալ եւ բոլոր պարագրեալ։ Դարձեալ ասեն. որ ինչ ի վերայ զայումք յետ կատարելութեան նորին, պատահումն է Կմա<sup>2</sup>. ապա եւ մարմինն բանին պատահումն է։

Ասեմք առ այս. եթէ բանն Աստուած էառ զմարդկային բնութիւնն<sup>3</sup>, զի լինիցի Ճշմարիտ մարդ. այլ մարդ լինելն է սեռ գոյացութեան եւ ոչ սեռէ պատահման<sup>4</sup>։

Դարձեալ ասեն. անարժան է բնակելն Աստուածոյ յարգանդի եւ աղջատանք. եւ բազումք զայթակղինն եւ մոլորին զայս լսել։

Ասեմք. թէ ոչ է անարժան. զի ստեղծովն ի ստեղծուածն բնակեցէ. որպէս շնորհն ի շենուածն իւր։ Եւ աչա յերկինս բնակէ Աստուած, եւ զամենայն տեղիս լուս. եւ յամենայն մարդկան միտս է։ Կոյնպէս եւ ի սուրբ արգանդ [Կուսին] բնակեցաւ<sup>5</sup> եւ ոչ է աղջատանք թէ սախատիպն ի պատկերն բնակեցէ<sup>6</sup>. զի զորձեոքն էստեղծ, ոչ գարշի անձամբ բնակիլ ի նմա. իսկ թէ բազումք մոլորին եւ գալթակղն<sup>8</sup>. ի չարութենէ եւ ի հպարտութեանց է, որ ոչ հաւատան Սուրբ Գրոց, եւ ոչ կամին Ճանաչել զբարութիւն<sup>9</sup>. Եւ աչա ի ստեղծմանէն բազում մոլորութիւնք եղեն յաշխարհի։

Դարձեալ ասեն. որպէս բարութիւն<sup>10</sup> ոչ միաւորի ընդ չարի, այսպէս մեծ կարողութիւն<sup>11</sup> Աստուածոյ ոչ միաւորի ընդ տկարութեան մարդու<sup>12</sup>,

Ասեմք թէ տկարութիւն մարդկայինս բնութեան ոչ նուազեցցց զեծ կարողութիւն<sup>13</sup> Աստուածոյ. զի առանց շփոթման միաւորեաց

<sup>1</sup> Ա. ոչ այլայլեցաւ։

<sup>2</sup> Ա. նմին։

<sup>3</sup> Ա. զմարդկայինս բնութիւն։

<sup>4</sup> Ա. ի սեռէ դոյացութեան եւ ոչ ի սեռէ պատահման։

<sup>5</sup> Ա. բնակելն։

<sup>6</sup> Ա. նոյնակէս եւ ի սուրբ արգանդն կուսին — Մերօրինակին մեջ կուսին, մերջն գրուած է սովոր վաց։

<sup>7</sup> Ա. բնակիլ։

<sup>8</sup> Ա. գայթակղին եւ մոլորին։

<sup>9</sup> Ա. զբարութիւնն։

<sup>10</sup> Ա. բարին։

<sup>11</sup> Ա. կարողութիւնն։

<sup>12</sup> Ա. ի մեջ այսպէս է նախագաւութեանց կարգը։

<sup>13</sup> Դարձեալ մեծ էղորմութիւնն Աստուածութեան քարզարութիւնն. պարագրութիւնն բաւարար լինել եւ լարարել։ Ասեմք առ այս, եթէ ակարութիւնս մարդկայինս բնութեան, եւ այլն։

<sup>14</sup> Ա. կարողութիւնն։

‘զմարդկային’<sup>1</sup> բնութիւն ընդ իւրում ‘աստուածութեան’<sup>2</sup>. այլ տկար բնութիւնն մեծացաւ միաւորութեամբն. զի ի մեղաց անմեղ, անմահ՝ եւ<sup>3</sup> անապական եւ Աստուած եղեւ: Եւ ‘տկարութիւն’<sup>4</sup> ոչ է նման չարութեան. զի չարութիւն զրկեալ է ի վախճանէն, այլ ‘տկարութիւն’<sup>4</sup> ոչ:

‘Դարձեալ ասեն. մեծ է ողորմութիւն Աստուծոյ քան զարդարութիւն. պարտ էր ողորմութեամբ քաւել եւ ոչ մարդ լինել եւ չարչարել’<sup>5</sup>:

Ասեմք թէ ոչ վայելէր ‘ողորմութեան’<sup>6</sup> Աստուծոյ առնել ընդդէմ արդարութեան, այլ լինել ի միասին. վասն այնորիկ վճարեաց զպարտութառ ‘ողորմութեան’<sup>6</sup> եւ կրեաց զպատիժութառ:

Դարձեալ ասեն. կարող էր Աստուած կամելով միայն փրկել զմարդ. կամ այլ ինչ ստեղծուածով վճարել զպարտութառ:

Ասեմք թէ կարող էր Աստուած կամելով փրկել. այլ պատշաճ էր Աստուծոյ մարդ լինել. զի ‘սէրն’<sup>7</sup> նորա երեւեցի ի մեզ. այլ եւ գործ արդարութեան ցուցցի: Եւ զի ոչ այլ ինչ ստեղծուածով վճարեաց ‘զպարտ’<sup>8</sup> մարդկան. զի ամենայն ստեղծուած ունի զօրութիւն հունաւոր. իսկ վճարել զպարտութառ պիտոյ էր անհուն զօրութիւն: Եւ դարձեալ. զի մի ստեղծուածոյ ինչ շնորհընկալ եւ պաշտօնատար լիցուք, այլ Աստուծոյ ‘փրկչի’<sup>9</sup>:

Դարձեալ ասեն. թէ Քրիստոս բաւականապէս վճարեաց զպարտութառ, անիրաւ երեւի. զի դեռ եւս կրեն մարդիկ ‘զպատիժութառ’<sup>10</sup>. նաեւ ոչ էր պիտոյ վասն մեղաց ալօթք, ողորմութիւն եւ այլն:

Ասեմք առ այս. եթէ Քրիստոս բաւականապէս վճարեաց զպարտութառ եւ երարձ զմեղս, եւ մնաց պատիժքն, զի ‘չարչարակից լիցուք Քրիստոսի եւ փառացն հաղորդեսցուք: Նաեւ թէ հաւատացեալքն ի Քրիստոս լիւալ էին անչարչարելի ի կեանս յայս, վասն մարմնոյ բարութեանն առաւել քան թէ վասն ‘հոգեւորին’<sup>11</sup>

Հաւանեալ էին հաւատացեալքն Քրիստոսը, յայնժամ եւ ոչ լինէր հաւատոյն վարձ: Եւ թէ պիտոյ է վասն մեղաց բարեգործութիւնք: Ասելի է թէ մահն Քրիստոսի է պատճառ փրկութեան ընդհանրական, որպէս մեղք առաջին մարդոյն էր ընդհանրական պատճառ դատապարտութեան: Արդ՝ որպէս մահն Ադամայ հասանի առ իւրաքանչեւր ոք<sup>1</sup>, որ փրկին ի ձեռն վերստին ծնընդեան աւաղանին բարի գործք:

Դարձեալ ասեն. մեղքն ‘մեղք’<sup>2</sup> ոչ սրբի, այլ առաւելու. այլ սպանանելովն զքրիստոս բազումք մեղանչեցին:

Ասեմք թէ մահն Քրիստոսի էր վճարող մահու մեղաց մարդկան: Եւ զի բնական մահն էր վասն սկզբնական մեղացն: Իսկ վասն ներգործական մեղացն, որ էր կամաւոր, պարտ էր մեռանել բռնադատական մահուամբն: Վասն այսորիկ Քրիստոս մեռաւ վասն սկզբնական մեղացն<sup>3</sup>, եւ բռնադատութեամբ ի ձեռն այլոց՝ վասն կամաւոր ‘մեղք’<sup>4</sup>: Եւ զի ոմանք մեղանչեցին ի մահն Քրիստոսի, ‘ոչ էր ինչ’<sup>5</sup> պատճառ ի կողմանէ նորա, որպէս ասէ Սաղմոսն. ընդ իս ‘է’<sup>6</sup> թշնամութեամբ ի տարապարտուց:

Դարձեալ ասեն. մեղք ջնջի ապաշխարութեամբ, որպէս գուրք ասէր. ապա ‘էր’<sup>7</sup> պիտոյ Աստուծոյ մարդանալ: Եւ դարձեալ. գործ ‘մարմաւորութեան’<sup>8</sup> մեծ էր քան զգործ ստեղծանելցն. ապա որպէս ի ստեղծանելն ամենայն մարդիկ ստեղծան. նոյնպէս ի ‘մարմին’<sup>9</sup> լինելն ամենայն մարդիկ պարտին փրկիլ. այլ այս ոչ է եղեալ:

Պատասխանեմք առաջնոյն. թէ ‘ապաշխարութիւն’<sup>10</sup> եւ այլ բարի գործք ոչ կարեն ջնջել զմեղս, թէ ոչ ‘լինի’<sup>11</sup> հիմնացեալ հաւատով ի վերայ չարչարանացն Քրիստոսի: ‘Առ’<sup>12</sup> միւսն ասեմք, թէ ոչ է պատճառն ի կողմանէ Աստուծոյ, որ ամենեքեան ոչ փրկին, այլ յինքեանց: Զոր օրինակ. թէ ոք ի տիւն զակն իւր նսիէ ի խաւար մնայ, ինքն է ‘պատճառ’<sup>13</sup> եւ ոչ արեւն:

<sup>1</sup> Ա. ունի լուսանցքի վայ: ‘Ճնընդեամբ, այսպէս մահն Քրիստոսի պարտ է հասանել առ իւրաքանչեւր ոք:

<sup>2</sup> Ա. մեղքը:

<sup>3</sup> Ա. մեղք:

<sup>4</sup> Ա. մեղացն:

<sup>5</sup> Ա. ոչինչ էր:

<sup>6</sup> Ա. պակասէ յԱն:

<sup>7</sup> Ա. ոչ էր:

<sup>8</sup> Ա. մարմաւորութեանն:

<sup>9</sup> Ա. մարմինն:

<sup>10</sup> Ա. ապաշխարութիւնն:

<sup>11</sup> Ա. լինին:

<sup>12</sup> Ա. եւ առ:

<sup>13</sup> Ա. պատճառն:

<sup>1</sup> Ա. զմարդկայինս:  
<sup>2</sup> Ա. աստուածութեանն:  
<sup>3</sup> Ա. եւ, պակասէ յԱն:

<sup>4</sup> Ա. տկարութիւնն:  
<sup>5</sup> Ա. այնմ որ ասեն, ողորմութիւնն մ.ծ է քան զարդարութիւնն, չմման. նախորդ ծանօթութեան հետ:

<sup>6</sup> Ա. ողորմութեանն:

<sup>7</sup> Ա. ուեր:

<sup>8</sup> Ա. զպարտութառ:

<sup>9</sup> Ա. փրկչին:

<sup>10</sup> Ա. պատիժք:

<sup>11</sup> Ա. քան հոգեւորին:

Եւ որպէս ի զուգաւորութենէ արուին եւ իդին ոչ միշտ ծնանի զաւակ, եւ այս ոչ ի կողմանէ ստեղծողին, որ ասաց Աճեցէք եւ բազմացարուք. այլ ի պակասութենէ .առնողին կամ կրողին նիւթոյն:

Դարձեալ ասեն. թէ՝ մարմին լինել<sup>1</sup> Բանին էր պատճառ փրկութեան մարդկան, պարտ էր լինել ի սկզբանէ աշխարհի. զի առաջինքն փրկեալք էին: Եւ դարձեալ ասեն. մեղք հրեշտակաց եւ մարդկան էին ի միոյ սեռի. այսինքն հպարտութեան. եւ զհրեշտակս ոչ փրկեաց, նաեւ ոչ էր պարտ զմարդիկ փրկել:

Առաջնօյն ասեմք. եթէ թողաւ մարդկան երկայն ժամանակս ի բնական օրէնքն եւ անկաւ՝ յանարգ՝ մեղք<sup>2</sup>: Կամ եւ ետ գրաւորական օրէնք, զի խորշեցին ի մեղաց, եւ ոչ այսու արդարացան. եւ ապա եկն շնորհաց օրէնքն, զի ճանաչեցուք զփրկութիւն ի քրիստոսէ եղեալ: Եւ դարձեալ, որպիսութիւն մարդկային կենաց ոչ առ ժամայն ի կատարումն հասանէ. որպէս մանկունք նախ վարժին փարբագոյն ուսմամբ, նոյնպէս անպատճաճ էր նախ զմեծամեծ պատուիրանս տալ մարդոյս. այլ զփրունս, զի սովորեսցի անկատար ուսմամբ, եւ ապա ի կատարեալ օրէնս հասցէ.՝ Երկրորդ<sup>3</sup> ասեմք. թէ հրեշտակք ոչ կարէին նորոգիլ. այս է պատճառն զի ընտրութիւն<sup>4</sup> հետեւի կարծեացն: Եւ հրեշտակք անփոխելի իմանան եւ կարծեն. վասն այսորիկ անփոխսապէս ընտրեն՝ զչար կամ զբարի<sup>5</sup>. յաղագս որոյ անզեղզ մնացին: Եւ դարձեալ, հրեշտակի իմանալաբար կարեն ուսանել. իսկ մարդն կարօտ է ուսանել զգալապէս: Եւ դարձեալ. հրեշտակաց մասն կորեաւ եւ բոլորն մնաց. իսկ թէ զմարդն ոչ էր փրկեալ, սոլորն էր կորուսեալ: Զայս եւ սոյնպիսօք հեթանոսք հակառակին<sup>6</sup> ընդ սուրբ Եկեղեցիս<sup>7</sup>:

Այժմ դարձեալ մեք ցուցցուք. զի պատշաճ էր բանին մարդ լինել: Եւ զի մարդեղութիւն բանին յայտնի է ի Սուրբ Գիրս. այլ նոքան հաւատան: Վասն որոյ բանական իմացմամբ ցուցցուք: Կախ զի բնութեամբ է՝ մարդոյ<sup>8</sup> սիրել զԱստուած: Եւ յայտնի է. զի մոլորեցաւ

զհետ զանազան սուստ աստուածոց. վասն որոյ Աստուած մարմացաւ եւ երեւեցաւ. զի ծանիցուք զմին եւ զՃմարիտն Աստուած: Դարձեալ. կամեցաւ առաջին մարդն աստուածանալ եւ ոչ կարաց ի տարածամու. յաղագս որոյ Աստուած մարդ եղեւ եւ աստուածացցոյ զնա: Դարձեալ. չարախօսէր սատանայ, եթէ բնութեամբ չար եւ մեղանչական է մարդն. Աստուած մարդ եղեւ եւ եցոյց անմեղ եւ բարի զբնութիւն<sup>1</sup>, ի բարի արարէն եղեալ: Դարձեալ. նա որ շնորհօք իւրովք արար, ողորմութեամբ իւրով՝ Եւ<sup>2</sup> Փըրկեաց: Դարձեալ. որպէս Աստուածոյ իւր է ստեղծանելն, այսպէս նորա է<sup>3</sup> նորոգելն եւ փառաւորելն: Ստեղծեաց յօչընչէ եւ նորոգեաց յապահանութենէ, եւ ի վախճանի փառաւորեսցէ: Դարձեալ. ինքն արարիչն եհատ վճիռ եւ դատապարտեաց զԱղամ. վասն որոյ ինքն մարմացաւ եւ չարչարեցաւ, եհատ զվճիռն եւ ազատեաց զնա: Դարձեալ. սէր նորա եւ ամէնիմաստ՝ գիտութիւն<sup>4</sup> երեւեցաւ. զի թէ ոչ էր մարդացեալ, ասէին թէ չկարէր, կամ ոչ կամէր, կամ ոչ գիտէր. եւ երեւի յայսմանէ տկարութիւն, տգիտութիւն կամ նախանձ, որ կարի իմն անպատշաճ է Աստուածոյ: Դարձեալ. սատանայ յաղթեաց մարմոյն, եւ Աստուած նովին մարմնով յաղթեաց յաղթովին. եւ է այս գործ արդարութեան: Դարձեալ. զի ուսուսցէ յաղթել զշան, մանաւանդ արդարութեամբ քան՝ հզօր բռնութեամի<sup>5</sup>. Դարձեալ. զօրացաւ մահ ի մարդկային բնութիւն. վասն որոյ անմահն Աստուած մարդ եղեւ եւ անմահացոյց վերստին: Յաղագս այսոցիկ եւ առաւել քան զայս, բանն<sup>6</sup> է առ զմարդկայինս բնութիւն եւ երեւեցաւ մարդ ի մէջ աշխարհի եւ փրկեաց զեղ:

Այլ թէ ասիցէ Տաճիկն, թէպէտ հաւանեցաք այսմ, սակայն Հայր եւ Որդի՝ ասել<sup>7</sup> անպատշաճ լսի: Ասեմք թէ<sup>8</sup> Մովսէսի Թավութիւն շարարածս ամենայն ծնունդ եւ արարած, ասէ, Աստուածոյ: Դարձեալ ասէ վասն մարդկան. Սա ինքն է Հայր քո, որ արար եւ ծնաւ զքեզ: Եւ դարձեալ ասէ. Որդի անդրանիկ իմ՝ է<sup>9</sup> Խորայէլ, սիրեցի զնա: Եւ դաւիթ ասէ. Ես ասացի թէ

<sup>1</sup> Ա. զբնութիւնն:

<sup>2</sup> Պակասէ յԱ. ն:

<sup>3</sup> Ա. նորա իւր է:

<sup>4</sup> Ա. գիտութիւնն:

<sup>5</sup> Ա. հզօրութեամբ:

<sup>6</sup> Ա. Աստուած բանն:

<sup>7</sup> Ա. ասելն:

<sup>8</sup> Ա. եթէ:

<sup>9</sup> Պակասէ յԱ. ն:

<sup>1</sup> Ա. մարմին լինել:

<sup>2</sup> Ա. յարդանդէ ի մեղք:

<sup>3</sup> Ա. Երկրորդին:

<sup>4</sup> Ա. ընտրութիւնն:

<sup>5</sup> Ա. զարին կամ զբարին:

<sup>6</sup> Ա. հակառակին:

<sup>7</sup> Ա. Եկեղեցի:

<sup>8</sup> Ա. մարդոյս:

աստուածք իցէք կամ որդիք բարձրելց ամենեւ քեան:

Եւ իթէ արալածոց եւ մարդկան հայր կոչի Աստուած, վասն զի ի Նմանէ ստեղծան, զինչ անպատշաճ է Քրիստոսի հայր կոչել զնա, որ ի բնութենէ հօր ծնաւ նախ քան զյաւիտեանս, որպէս ասէ Դաւիթ. Յառաջ քան զյաւիտեանս ծնայ զքեզ: Եւ վասն մարմնոյ միութեան<sup>1</sup> զինչ է օտար, իթէ զճառագայթս արեւու, որ ի յօդս է միացեալ, ասեմք եթէ ծնունդ է արեգականն, կամ զբանս որ ի գիրս է միաւորեալ, ասեմք Կ.թէ<sup>2</sup> ծնունդ է մատան: Կ.յնպէս եւ Բանն հօր, յարենէ կուսին, իրը մելան միաւորեալ եւ մարմնով<sup>3</sup> երեւեալ: Եւ ինքն Հայր Աստուած ի Յորդանան՝ գետն<sup>4</sup> վկայեաց ի վերայ մարմնացեալ բանին. Դայ է որդի իմ սիրելի: Եւ ինքն Փրկիչն ասէր. Ելի՞ ի Հօրէ եւ եկի յաշեարհ. գարձեալ թողում զաշխարհ եւ ել թամառ Հայր, Ալդ՝ եթէ դու զԱստուած հաւատաս, զԱստուծոյ բանն ընդէր ուրանաս, եւ ոչ ասես Հայր եւ Որդի: Զի՞նքն Հայր Աստուած վկայեաց եւ Որդին յայտնեաց եւ դժուար լսես<sup>5</sup>. Եւ մարդարէքն յառաջադրոյն ուսուցին եւ ոչ հաւատաս<sup>6</sup>:

Եւ զարձեալ ասեմ ի կարճոյ. զժուար լսես թէ Քրիստոս՝ Որդի՝ Կատուծոյ<sup>6</sup>. ապա դու ցոյց ինչ թէ ովկ է ի յերկրի Հայր Քրիստոսի. ապա թէ չկարես ցուցանել, հաւատայ Աստուծոյ Հօր, որ ասաց. Դայ է որդի իմ սիրելի<sup>7</sup>. կամ հաւատայ Քրիստոսի, որ ասաց Աստուծոյ որդի եմ, ըստ այնմ. դու հաւատան յՈրդին Աստուծոյ: Ահա յայտնապէս վկայութիւն ի Սուրբ Գրոց ասացեալ. Աստուած եւ Ու գի Աստուծոյ Այսքան առ այս<sup>7</sup>:

(Շարունակելիի:)

ԹԱՐԳԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ



1 Ա. միութեանն:  
2 Ա. թէ:  
3 Ա. մարմնով:  
4 Ա. գետ:  
5 Պակասի յԱն:  
6 Ա. Աստուծոյ է:  
7 Պակասի յԱն:

ՊԵՐՍԿԱՀԱՅ ՆՈՐԱԳՈՅՆ ԸՆՈՒՂՆԵՐ

4.

ԵՐԳԻ ՄԱՐՏԻՐՈՍ ՄԵՆՈՒԿԵՑ

(Շարունակութիւն:)

3. Խաղ վասն դրութեան Սոր-Զուղայցու:

Սէրն աշխարհիս պակասոն է,  
Օր աւուր վատթար եմ տեսնում.  
Զոր ինչ ի գրոյ ասացեալ է,  
Փոխարէնն ներհակ եմ տեսնում:

Փիուել է Զոր զայու գարն,  
Շատացել է թշնամ, չարն.  
Ամնայն մարդ իւր տօմարն,  
Հաշիւն շատ սիսալ եմ տեսնում:

Սիսալ չասեմ, լաւ էք խբար,  
Հայոց անէրն տասներկու հազար.  
Մեր մեղքերն անթիւ, անհամար,  
Խափանուած ժամեր եմ տեսնում:

Խափանուեց նոյն հասարակութիւն,  
Զուղա մնաց հինգ հինգ հարիւր տուն.  
Երեք ձեւ քրիստոնէութիւն,  
Ոսկոյ մէջ սուաս եմ տեսնում:

Միջյ բնակիչքն անտիրակտն,  
Բաղումք միմանց հետ ներհական.  
Քահանայ թէ աշխարհական,  
Անհամար բաներ եմ տեսնում:

Յարմար է մարդոյն մնալ իւր տան,  
Զուղա բազումք պրօտէստան.  
Կաթոլիկք եւ միջտ բնական,  
Անուամք քրիստոնեայք եմ տեսնում:

Անուամք պահեմք քրիստոնէութիւն,  
Գործովք ունիմք պակասութիւն.  
Եւս առաւել սուտ խօսութիւն,  
Խաբեբայ մարդիկ եմ տեսնում:

Խաբելով բնիերն ընկերի,  
Սուտ երգում սնուտի բանէրի.  
Ցիսուս Քրիստոս մեր մեղքն ների,  
Երգումն մեծ պատիւ եմ տեսնում:

Մէծ պատիւ տան միշտ օտարաց,  
Եւ իւրեանց խմբին չեն կպած.  
Չկամի տեսնել դուռ գրացեաց,  
Ներհակող մարդիկ եմ տեսնում:

Ներհակող մարդ շատ կերեւան,  
Բախիլ եւ կարօտ թաղն երեւան.  
Թէ մինն հազիւ ձեռն իւր բերան,  
Կոխանձող, մատնող եմ տեսնում: